

ՅԵՐԵՐԵՄԿԱՆ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

(Եպիստոլայի մասին)

Առականքը հատ հատ ուսումնասիրելուց յետոյ՝ աշակերտի մտքի մէջ այնքան նիւթ ամբարուած կը լինի՝ որ հարկաւ նոր նոր համեմատութեանց առիթ պէտք է դառնայ: Ըմբռնելուց յետոյ սկսվում է բազմակողմանի մտածողութիւնը, որ շարագրութիւնների մէջ ևս պէտք է արտայայտուի: Այս կարգի վարժութիւններին կու տանք հետեւեալ վերնագիրը՝

Առականքի նորոգ ուսումնասիրութիւնը համեմատական շրջանայեացքներով:

Շրջահայեացքներն ու նորոգ ուսումնասիրութիւնը առաջացնում են զանազան խնդիրներ, որոնցից գլխաւորները սոքա են.

Ա. Առակի հիմնական գաղափար արտայայտող իրողութիւնները՝ զատեւ նորա ամբողջութիւնից: Այս տեղ պահանջվում է ոչ թէ զանազան բացատրութիւններով առակի գլխաւոր գաղափարի լուսաբանութիւնը կամ գիտը, այլ այդ գաղափարը արդէն «պիտի» համարելով պէտք է այն կէտերը ցոյց տրուին, որոնք առակի մէջ մարմնացնում են նոյն գաղափարը: Արեմն ինքը ուսուցիչը առանց երկարաբանելու այն զլխից յայտնում է, թէ որն է առակի գլխաւոր գաղափարը, և յետոյ առաջնորդում է, որ աշակերտը գտնէ և ցոյց տայ փաստերը, իրողութիւնները, կէտերը, որոնք որ նոյն գաղափարի հաստատութիւն են կազմում: Օրինակի համար առնենք Գոյլ և Գառնուկ առակը:

—Երբ որ ասում են «մահանէն (պատճառանքը) գետնի տակից հանել», այս խօսքը փոխաբերական մտքով է գործածվում: Ի՞նչ է դորա իմաստը:—Գետնի տակը չեն պահուած կամ չեն բուսնում պատճառանքները: Բայց ով որ գետնի տակից է հանում, նա ուրեմն կուռելու, վշտացնելու, ամբաստանելու կամ բռնաբարելու համար պատճառ է փնտռում և գտնում այն տեղի, ուր որ բնաւ չը կայ: Նոյն այդ փոխաբերական խօսքով ևս կը յայտնուի և մեր առակի գլխաւոր գաղափարը: Այժմ դուք ցոյց տուեցէք, թէ առակը որ հանգամանքներով հէնց այդ գաղափարն է նկարագրում: Գիւրութեան համար խնդիրը մի քանի

մասերի կը բաժանեմ: Նախ ցոյց տուեցէք, թէ առակի մէջ հանդիսանում են մի զօրաւոր և մի անզօր արարած. երկրորդ՝ թէ զօրաւորը դիտաւորութիւն ունի անզօրին ոչնչացնել. երրորդ՝ թէ այդ վախճանով մասնէն գետնի տակից է հանում:

Ինդիրը մտաւորապէս այսպէս կը լուծուի.

Առակի մէջ հանդիսանում են մի զօրաւոր և մի անզօր կենդանի. զօրաւորը գայլ է, անզօրը՝ գառնուկ: Հէնց որ գայլը գետի ափին գառնուկին տեսաւ, իսկոյն վճռեց ուտել նորան, որովհետեւ քաղցած էր: Այս դիտաւորութիւնը վերջը յայտնում է նա հետեւեալ խօսքերով. . . . հազար էլ խօսես ու բարբաջես, այս օր քեզ . . . : Այս բռնաւորութեան դէմ գառնուկը չէր տուել նորան ոչինչ առիթ: Բայց նա՝ գայլը՝ ուզում էր գէթ մի առերևոյթ հիմք գտնել իւր մտադրած անիրաւութեան համար: Ուստի և ամէն տեսակ մեղաւորութիւններ բարդեց գառնուկի գլխին, նախ՝ իբր թէ գառնուկը այն ջուրը պղտորել է, որ գայլը խմել է, թէպէտ ինքը գետի վերէն է խմում, իսկ գառնուկը ներքև:

Յետոյ գառնուկի մի համեստ պատասխանը անէ՞ք անուանեց, ապա յանդիմանեց այնպիսի արարքը, որ գառնուկի ծնունդից առաջ կարող էր լինել և թերևս նորա հայրն էր գործել գայլի դէմ. վերջապէս նորան յանցաւոր համարեց, որ իւր՝ գայլի՝ դաշտն ու արտը կոծոտել է, թէպէտ ինքը այդպիսի կալուածներ չի ունեցել, իսկ գառնուկի ատամներն էլ տակաւին չէին բուսել: Այսպէս ուրեմն գայլը իւր բռնաւորութեան համար ամէն տեսակ պատճառանքներ հանեց գետնի տակից. —

Մնացած առակների հիմնական գաղափարները սոքա են.

Մարդ ձևանում է արհամարհանք ցոյց տալ այն բանի դէմ, ինչ որ իւր դուր վաստակներով չի կարողացել իրօք ձեռք բերել. — Հողորթութի արժանաւոր վարձը այն է, որ շորթածը իրա համար թոյն դառնայ. — Թող մեծը փոքրին չը քամահէ, որովհետեւ երբեմն փոքրագոյնն էլ կարող է նշանաւոր ծառայութիւն մատուցանել. — Ազնուութիւն է անդէն թշնամուն խնայել, ցածութիւն է նորանից վրէժ հանել. — Ով որ հաւատում է, թէ լաւագոյն է զրկանք կրել, քան զրկել, նորա մէջ լուում է վշտաբեր անիրաւութիւնների դէմ բողոքը. — Անյողողող հաւատարմութեան դէմ ի դերև է ելանում փորձութեան ամենայն արուեստ:

Բ. Հատուածին զանազան վերնագիրներ տալը, Այս վարժութիւնը յաջողեցնելու համար բաւական են մի քանի ցուցումներ, մինչև որ հետաքրքրուած աշակերտը վերջապէս իմանայ, թէ ինչպէս պէտք է շարունակէ սկսածը: Այդ գործի ժամանակ մի ձեռքով պէտք է լուացուի միւսը, այսինքն ինչ որ մէկը չը գիտենայ, այն պէտք է նա միւսից իմանայ: Բայց երկու կարգի են վերնագիրները, որոնցից մէկ տե-

սակը աւելի ընտիր է՝ քան միւսը, Լաւագոյն են այն վերնագիրները, որոնք այլոսով կամ բնականօրէն վճիռ և դատողութիւն են արտայայտում, որոնց մէջ որ ուրեմն մի խորհրդաւոր խօսքի և իմաստի լուսով ամբողջ պատմութիւնն է նկարագրւում. այնքան լաւ չեն միւս վերնագիրները, որոնք ամբողջ գործողութեան անձերի միայն մէկ կամ միւս կողմն են յայտնի կացուցանում. սակայն թոյլ աշակերտներից այդքանն էլ շատ պէտք է համարել: Ահա մի առակի երկու տեսակ վերնագիրները, որոնք աշակերտի համար ցուցումներ են, թէ ինչպէս կարող է նմանօրինակ շարունակել:

ա. Իմաստնախորհ սարեկ. անխոնջ սարեկ, հնարագէտ սարեկ:

բ. Ով համբերէ, իսպառ կեցցէ: Տոկունութիւնը պսակւում է: Կացնի մի հարուածով ծառը չի գլորուի: Կաշնի պնդութիւնն էլ կտորւում է կամքի պնդութիւնից: Յոյսը չի ամաչեցնում: Յարատևութիւնը անվարձ չի մնայ: Անխոնջ աշխատութիւնը յաղթում է արգելքներին. բայց արգելքները չեն յաղթում աշխատութեան փոթը: Ինչ որ ջանքը չանէ, խելքը կանէ:

գ. Տրամաբանական ընդհանուր գաղափարներ:

1. «Ինչ որ արդար է» և «չարդար» նորմանէ բուրքը: Կարծես թէ այս բառերը արտայայտում են առհասարակ այն ինչին որ հասնել ենք ուզում: Երբ որ արդարեւ այդ է նշանակում, բայց ոչ բնականօրէն: Իրտաւորութիւնը մի կամք է նպատակի համար. նպատակը կամքի առաջ դրուած (կամքի դիտած) առարկան է: Ով որ մի դիտաւորութիւն ունի, նա ուրեմն խորհում է թէ բնականօրէն նա իւր մտադրութիւնը դարձրել է մի բանի վերայ, նա դիտում է հասնել այդ բանին, որը որ և է նպատակ: Զէնքի համար նպատակն է նշան առնելու տեղը, դիտած բանը, վախճանը:

Առականների մէջ շատ անգամ պատահեցան դիտաւորութիւնների նկարագրութիւն, որ առականների մէջ, Այդ գոյականը ծագում է բնական բանից: Ով որ դիտաւորութիւն ունի, նա մտադրում է մի որ և իցէ բան. Ի՞նչ էր գայլի մտադրութիւնը: Այդ խօսքը այնպէս ձևացրու, որ մէջը գործածես բնականօրէն. բանը, իմաստը որ յարմարութիւն լինի՝ բոլոր առականների համեմատութեամբ հարցմունք տուեցէք հետեւեալ օրինակի պէս. 1^օ ինչ բնականօրէն, 2^օ երբ քայլը «չաւատարիմ» թուլաւ առակի մէջ կամ ինչ էր նա բնականօրէն: Արին որ նշանակեմ, ձեզանից մէկը թող կազմէ հարցմունքը, իսկ միւսը տայ նորա պատասխանը:

Ով որ դիտաւորութիւն ունի, նա կամենում է թէ բանին հասնել, որի համար ինչին որ նա հասնել է ուզում, այն կոչւում է նպատակ. և ինչ որ

նպատակին հասնելու համար նա կատարում է, կոչվում է նոր-տ-ի փոշի կամ անուշի:

Ի՞նչ էր ծարաւ սարեկի նպատակը: Ի՞նչ հնարներ գործ դրեց փարչի ջրին հասնելու համար: Պատասխանը այսպէս ամբողջացուցէք: Որպէս զի ջրին հասնել կարողանայ, այս էր սարեկի ձգտած նպատակը: և այդ վախճանին հասնելու համար, հետեւեալ միջոցներ գործ դրեց. իւր կրատուցը մեկնեց փարչի բերանը և այլն: Միւս առակներն էլ այսպէս քննենցէք, ուր որ մէկը մի նպատակի հետամուտ է երևում. ի՞նչ էր նպատակը և ի՞նչ էին գործ դրած հնարները:

Բայց պէտք է զանազանել սոսկ նպատակը վախճանական նպատակից: Միթէ սարեկի վախճանական նպատակը այն էր, որ հասնի ջրին. ոչ, իւր ծարաւի պապակը կտրել — այս էր վախճանական նպատակը: Միւս առարկաների մերձաւոր և վախճանական նպատակները ևս ցոյց տուցէք:

2. «վէճ-ի» և «բր-ի-ն» գրգռ-ի-ն-ը Գրգռ-ի-ն-ը: Մի առարկայի գոյութեան մէջ փոփոխական ստորոգութիւնները կոչվում են վէճ-ի: Առարկան փոփոխելով իւր վիճակները՝ անփոփոխ է պահպանում իւր էութիւնը: Զոր օր, մի առարկայ կարող է դադարման վիճակից շարժման մէջ դալ, և ընդհակառակ. մարդու առողջութեան վիճակը կարող է անառողջութեան փոխուիլ: Բոլոր ֆիզիքական երևոյթիւնները այնպիսի փոփոխութիւններ են, որով մարմնի էութիւնը անզեղծ է մնում: Վիճակի փոփոխութիւնից նոր բր-ի-ն է ստեղծվում արարածի համար, նոր յարաբերութիւններ են առաջ գալիս:

Մերացած առիւծը անուշ ընկած էր իւր որջի առաջ, և նոցորութեան վիճակը նորան ձգեց ուշ-ի-ն բր-ի-ն մէջ այն կենդանեաց յանդիման, որոնք երբեմն նորանից սարսափում էին: Այժմ նա ուզէ չուզէ, բայց պէտք է կուլ տայ ամեն տեսակ անպատուութիւն:

Մկները անհոգ և ուր-ի-ն ցնծում էին ժայռերի ծերպերի վերայ, որի տակը քնած էր առիւծը. նոցանից մէկը վայր ընկնելով խիստ վշտ-ի-ն բր-ի-ն մէջ ընկաւ: նա ինքը յետոյ առիւծին գտաւ մի այսպիսի վտանգաւոր դրութեան մէջ, որի մեծահոգութեան շնորհքը վայելել էր, և օգտեց նորան այդ դրութիւնից: Ով որ բարկանում է, առաջ նորա սիրտը հանդարտ էր և միայն այժմ գրգռուած վիճակ է ստանում: Մի այսպիսի վիճակի մէջ էր պարտիզպանը, երբ որ միսը թունաւոր վիճակի դարձրեց: Շողաբորթութիւնները ազուալին խիստ ուրախ վիճակի փոխեցին. իսկ թոյնը աղուէսին այնպիսի վիճակ տուեց, որ նորա մահով կնքուեցաւ: Խաղողին հասնելու համար աղուէսի գործ դրած զուր ջանքերը նորան մի այնպիսի դրութիւն տուեցին այդ բոլորի ակնատես թռչունների առաջ, որ նա ծաղրելու առարկայ պէտք է դառնար. բայց իւր կեղծապատիր

խօսքերով նա կարողացաւ այդ գրութիւնից ազատ մնալ.

Գայլ և գառնուկը միաժամանակ ծառուծեց եկան վտակի ափին: Այդ պատճառով գառնուկի համար անմիջապէս ստեղծուեցաւ խիստ վտանգաւոր դրութիւն:

Գ. Բարոյական գաղափարներ լուսաբանութիւն:

1. Ո՞վ է շողորթը (Աղուէս և ագուաւ): Ագուաւ ո՞ր առաւելութիւնները գովեց աղուէսը: Մէկի առաւելութիւնները յականէ անուանել նշանակում է նորան փառաբանել: Այդ փառաբանութեանը ի՞նչ ասենք, քանի որ ագուաւը իրան տրուած առաւելութիւններից իսպառ թափուր էր: Գա է մի կեղծ, շողորթը փառաբանութիւն: Աղուէսը ի՞նչ դիտմամբ շոյլեց ագուաւին չարժանացած առաւելութիւնները (քողարկած գովասանութիւնները): Որպէս զի նորան հաճոյանայ և նորա յօժարակամութիւնը կամ համակրութիւնը ստանայ: Իսկ այդ ձգտման ևս դիտումն ի՞նչ էր: Նա ուզում էր մտի կտորը խաբէութեամբ կորզել: Ընդհանրացնելով խօսքը կասենք, թէ նա ուզում էր այն յօժարակամութիւնից շահուիլ: Եւ ի մի ամփոփելով կաւելացնենք, ագուաւին աղուէսը զարդարեց զանազան առաւելութիւններով կամ նորա քիմքը քաղցրացրեց զանազան գովասանքներով, որպէս զի նորա հաճութիւնը ստանայ և այդ հանգամանքից անձնակամ օգուտ քաղէ: Ով որ այսպէս է գործում, նա շողորթնու է: Ո՞վ է շողքորթում: Ի՞նչ է նշանակում շողքորթել: Ի՞նչ դիտմամբ շողքորթում է զոր օր. արուեստաւորի աշակերտը իւր վարպետին, աղախինը՝ իւր տիրուհուն, պալատականը՝ իշխանին:

Ամփոփենք այս բոլոր ռճով. — Աղուէսը Արամազդի թուշուն անուանեց ագուաւին, որ չէր իսկապէս. առանց նորան, թէ նա ունի գեղեցկագոյն փետուրներ և զօրեղագոյն կտուց, որ ճշմարիտ չէր. նա ուրեմն այնպիսի առաւելութիւններ տուեց, որ ագուաւը չունի, կամ նորան շոյլեց չարժանացած փառաբանութիւն: Նա այսպէս վարուեցաւ, որպէս զի ագուաւի շնորհքը վայելէ, և նորան այնպէս տրամադրէ, որ կարողանայ նորանից մտի կտորը գողանալ, այսինքն որպէս զի այն յօժարակամութիւնից շահուի:

Արդ ով որ մէկին առաւելութիւններ է ընծայում նորա յօժարութիւնը ստանալու համար, նա շողորթնու է: աղուէսն ուրեմն շողորթ էր, իսկ շողորթնու է կոչւում այնպիսի խօսքեր, որով մէկին առաւելութիւններ է արվում այն դիտմամբ, որ նորա յօժարութիւնը ձեռք բերուի անձնական շահի համար: Զոր օր. մի աշակերտ իւր վարպետին շողքորթում է, որպէս զի շարունակ աշխատանք ստանայ նորա արուեստանոցում և ապրուստից չը զրկուի. աղախինը՝ իւր տիրուհուն, եթէ ուզում է տնից գնալու առժամանակեայ արձակուրդ ստանալ, պալատականները

իշխանին. որպէս զի նորա ողորմութիւնները առաւելութեամբ վայելեն:

2. Ո՞վ է *Բարեգիւղը* (նոյն առակ): Ինչքո՞ց է երևում, թէ աղուէսը սուտ է ձևանում: Նորանից, որ նա այնպէս էր անում, իբր թէ ագուսը նորան մի կատարեալ արծիւ է երևում: Այնպէս էր անում — ձևանում էր — կեղծ էր ձևանում: Ի՞նչ էր այս սուտ երևոյթի հետեանքը: Ագուսը հաւատաց, թէ աղուէսը նորան արդարև արծուի տեղ է դնում: Այս էր մի *Բարեգիւղ*, իսկ ճշմարտութիւնն ու մոլորութիւնը հակառակ բաներ են: Ագուսի կարծիքը սուտ էր, մոլոր: Ուրեմն աղուէսը քողարկուելով *Բարեգիւղ* ագուսին, ի՞նչ է ուրեմն մոլորեցնելը: Ո՞րպիսի գործողութիւն մոլորեցնել է դառնում: Կեղծ կերպարանք առնելը, որով ուրիշի մէջ զարթուցանվում է սխալ կարծիք: Ի՞նչ է ուրեմն մոլորեցնելու հետեանքը. սխալ կարծիք, որ մարդու մէջ կազմվում է կեղծ քողարկութեան պատճառով: (Մոլորեցնելն ուրեմն ոչ այլ ինչ է, ըստ եթէ այնպէս անել, որ մէկը երեսօք երևոյթը իրօք եղելութիւն կարծէ): Յիշիր Յակոբին և նորա հայր Իսահակին. Լաբանին և Յակոբին. Սամիսոնին և Գալիլային. Ո՞ւմ չի կարող մոլորեցնել ոչ ոք:

Ամփոփումն — Աղուէսը այնպէս կերպարանեցաւ, իբր թէ ոչ թէ ագուս, այլ արծիւ է տեսնում, ուրեմն իւր կեղծաւորութիւնը քողարկեց: Այդ միջոցով նա կարողացաւ ագուսի մէջ այն կարծիք զարթոցնել, թէ ինքը արծիւ է երևում աղուէսի աչքում: Բայց այս կարծիքը սխալ էր, որովհետև աղուէսը շատ լաւ գիտէր, թէ կաղնու ծառի վերայ նստած թռչունը մի ագուս է: Իսկ ով որ իւր կեղծապատիր քողարկութեամբ ուրիշին սխալ կարծիք է ազդում, նա *Բարեգիւղ* է, ուրեմն աղուէսը ագուսին մոլորեցրեց, հետեապէս մոլորեցնելը այնպիսի խտրութեան թիւն է, որ սուտ ձևանալով է առաջ գալիս: Այսպէս կարողացաւ Յակոբը իւր հայր Իսահակին մոլորեցնել և անդրանկութեան օրհնութիւնը գողանալ. այսպէս մոլորեցրեց Լաբանը Յակոբին, նորան կնութիւն տալով Բաբելի փոխարէն Լիային. այսպէս մոլորեցրեց Սամիսոնը Գալիլային, երբ որ նորան ասաց, թէ ինքը այն ժամանակ իւր զօրութիւնից թափուր կ'մնայ, երբ որ իրան եօթը չուաններով կ'ապեն:

3. Ո՞վ է *Արեւելը* (Մուկ և առիւծ): Առակը պարզ պատասխան է տալիս այդ հարցմունքին:

Մկները ցնծութեամբ խաղում էին մի ժայռի վերայ, որի ձերպերի տակ մի որջ կար: Ժայռի տակը քնած էր առիւծը: Մկներից մէկը յաւակնեցաւ ժայռի ամենաբարձր ձերպի վերայ ելնելու, առանց խորհելու, թէ կարող է վայր ընկնել առանց կշռելու: որ եթէ առիւծի վերայ ընկ չի, անշուշտ նորա թսթերի մէջ կը բռնուի և կը ճվուրի: Նա ուրեմն անխօսեմ էր, որովհետև ով որ իւր վարքի հետեանքը չի մտածում,

անխոհեմ է: Այսպէս զոր օր. բարակ սառուցի վերայ քաղող մանուկը անխոհեմ է, որովհետեւ չի մտածում, թէ սառուցի բարակութիւնը չի գիմանայ և կարող է նորա ոտքի տակ կոտորուիլ, Անխոհեմ է նմանապէս և նա, որ չը լինելով ճարպիկ լուղորդ, այնու ամենայնիւ լողանում է գետի անծանօթ վայրերում. որովհետեւ չի մտածում, թէ գուցէ տեղը շատ խոր է: Անխոհեմութիւնը կարող է մինչև յանյաղատութեան և էկզիստանտիստի աստիճանի հասնել: Ով որ անխոհեմ կերպով և առանց կարեւորութեան մի մեծ վարձի մի է մղվում, նորան կոչում են յանյաղատան, իսկ եթէ վտանգը միեւրէն է՝ էկզիստ (գիժ համարձակ): — Էտեւեալ առածը անխոհեմութիւն է ակնարկում. Յետին խելքը առաջ լինի, մարդու ցաւին դարման լինի:

4. Ո՛վ է Քծուհին (նոյն առակ): Առիւծի հաշակը այդ յատկութիւնն է: Այն առակը, որ դորա և մկան մասին է խօսում, մի առիւծ է հանդիսացնում հէնց այդ կողմից, Ուստի և մենք կաշխատենք մեր վերնագրի պատասխանը այն առակի մէջ փնտռել:

Անխոհեմ մուկը, որի մասին որ խօսում է առակը, վայր է ընկնում քնած առիւծի վերայ և խանգարում է նորա հանգստեան քաղցրութիւնը: Առիւծը գերի է բռնում մկան, նա կարող էր պատժել այդքան յանդրգնութիւնը, բայց ազատ է թողնում մկան առանց որ և է ակնկալութեան, որ մուկը երբ և իցէ բարութեան փոխարէնը վճարէ: Ուրեմն առիւծը մեծահոգի է. վասն զի ով որ իւր թշնամուն թողութիւն է տալիս, երբ որ կարող էր նորա վերայ բանեցնել իւր իշխանութիւնը, այն ևս առանց որ և իցէ ակնկալութեան իւր բարութեան փոխարէն, նա մեծահոգի է: Այսպէս մեծահոգութեամբ վարուեցաւ Յովսէփը իւր եղբարց հետ: Նոքա վաճառել էին նորան: Իսկ երբ որ Եգիպտոսում նոքա կանգնած էին նորա երեսի առաջ, նա կատարեալ տէր էր նոցա մահու և կենաց սակայն նա անյիշաչարութեամբ նոցա վատութիւնը բարութեամբ հատոյց: Այսպէս վարուեցաւ և Դաւիթը Սաուղի հետ: Այսպիսի մեծանշանութիւն է բարոյում և մեր Տէր Յիսուս Քրիստոսը: Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին բարի արարէք ձեզ թշնամանողներին, աղօթեցէք ձեզ վշտացնողների և հալածողները համար:

5. Ո՛վ է Երեմիայի (նոյն առակ): Առակի իրողութիւններից այսքանն է մեզ հարկաւոր: Առիւծը մկան պարգևեց կենանքը, — հէնց որ վերջինը մտունչի ձայնով իւր բարերարին ճանաչեց, իսկոյն յիշեց նորանից վայելած շնորհքը, — երբ որ այն էլ իմացաւ, թէ նա վտանգի մէջ է գնաց նորան օգնելու, — և երբ որ տեսաւ, թէ օգնութիւն կարող է տալ, շտապեց և տուեց օգնութիւն: — Այս անհատական գէպքը այսպէս կընդհանրանայ. Ով որ վայելած բարութիւնը միշտ յիշում, և տե-

ղը եկած ժամանակ անյապաղ փոխարէնը հասուցանում է, նա երախտաբէտ է:

6. 1^o ն է ռեփրէնը (ծերացած առիծ): Ոխ հանել նշանակու է չարութիւնը չարութեամբ վճարել: Հարկաւոր է ուրեմն իրազեկ լինել նախ թէ առիծը անասուններին վնասներ է պատճառել, երկրորդ թէ սոքա ևս վնասներով փոխարինեցին: Հիմա ինչ է մեր անելիք գործը: Ցոյց տուր մէկը: Ընդհանրացրու այդ իրողութիւնները: Ցոյց տուր միւսը: Ե. յդ էլ ընդհանրացրու: Ի՞նչ դիտաւորութեամբ սոքա այդ վնասները տուին:

Լուծումն ոճով — Առիծը աղուէսի, գայլի, վարազի, եղի, էշի և երիվարի խաղաղութիւնն ու ապահովութիւնը առաջ շատ անգամ խլել էր, նա յափշտակել էր նախ նոցա մայրերին ապա և ձագերին, ուրեմն նոցա պատճառել էր վնասներ կամ չարութիւններ: Այժմ նոքա վշտացրին նորան հայհոյանքներով, ծակծկեցին, հարուածեցին և վիրաւորեցին այն չարութեանց փոխարէն, ինչ որ նորանից ստացել էին: Նոքա ուրեմն չարութիւնը չարութեամբ հասուցին: Հետևապէս ռիսկաւորութիւնը չարութեան հասուցումն է չարութեամբ: Այսպէս ռիսկանեցին Փղշտացիք Մամիսոնից, որ նոցա ցորենի հունձքը այրել էր, այրելով նորա կնոջն ու հօրը:

7. Ով է ց-ձ-ի (նոյն առակ):

Ցածողութեամբ կամ անարգամտութեամբ վարուիլ — ռիսկանել անզէն թշնամուց:

ա. Առիծը՝ կենդանեաց թշնամի:
բ. այժմ ծեր, անզօր, անզէն, մահուան դուռը հասած:
գ. կենդանիները նորանից հանում են իրանց ռիսկ:

Ամփոփումն: — Առիծը հալածել էր գայլին, աղուէսին, եղին, էշին, վարազին և երիվարներին և նոցա կեանքը վտանգի մէջ դրել: նա նոցա ծնողներին և զաւակներին պատառ պատառ էր արել: նա ուրեմն նոցա հասուցել էր պէս պէս չարութիւններ և նոցա վնասելու հետամուտ էր եղել, նա նոցա թշնամին էր, հիմա նա ծերացել, թուլացել էր և մահու մերձեցել, ուրեմն եթէ իրա վերայ ուրիշները յարձակուին, նա անկարող է պաշտպանել իւր անձը, այսինքն անզէն էր: Այս նորա վիճակից օգուտ քողեցին երբեմնապէս նորա ահով սարսափած կենդանիները և նորա վերայ թափեցին ամէն տեսակ չարութիւններ, կամ հանեցին իրանց ռիսկ նորանից՝ իրանց անզէն թշնամուց: Ով որ այսպէս է գործում, նա վարվում է անարգամտութեամբ, հետևապէս նոցա գործքը անարգամտութիւն էր:

Անարգամտութեան ներհակ է ազնուամտութիւնը, որի օրինակը ցոյց

տուեց երկվարը: Այսպիսի ազնուութեամբ վարուեցաւ մի անպատուած պարսկի որդին, երբ որ անդնդի եղբւրքին խոր քնած իւր թշնամուն վարթեցրեց և այդ վտանգաւոր տեղից հեռացրեց, նոյնպէս ազնիւ հանգիստացաւ Երրահիմ ամիրան, երբ որ իւր որդուն սպանողին, Գուսման շապկաին, օգնեց փախչելու:

Ի. Ինչ է Բարեխիտ — Ինչ է Բարեխիտ (Շուն և գայլ):

Փորձել — անիրաւութիւն գործելու յորդորել:

ա. Անիրաւութիւն:

բ. յորդոր:

գ. փորձութեան գաղափար:

դ. օրինակներ:

Պատարումն: — Հովուի շան պարտականութիւնն է լինել հօտի պահպան և պաշտպան, Այս պարտականութիւնից շեղուիլը անիրաւութիւն է: Գայլը համոզում էր շանը, որ թողնէ իւր հօտը և աշխատութիւնից հանգստանայ: Նա ուրեմն յորդորում էր նորան պարտազանց լինել կամ անիրաւութիւն գործել, կամ փորձում էր նորան: Հետեւապէս փորձութիւնը մի յորդոր է անիրաւութիւն գործելու: Այսպէս սատանան ուղեց Յիսուսին անապատում փորձել, որ նա իւր հրաշագործ զօրութիւնը անձնական գործերին նուիրէ, նոցանով հպարտանայ և մարմնական իշխանասիրութեան ակա ստանայ: Բայց Յիսուսը ընդդիմացաւ փորձութեան և պատասխանեց չարին. Հեռացիր ինձանից, սատանայ: Իսկ Աւան չընդդիմացաւ օձին, և ոչ էլ Ադամը Աւային: Նոքա դայթակողուեցան. Այսպիսի փորձութեան ենթակայ է մարդ իւր զգայականութեամբ, երբ որ նորա մէջ գրգռվում է մարմնասիրութիւն, այսինքն այնպիսի քաղցրութեանց սէր, որոնք բարոյապէս արգելուած են: Այսպէս էլ աշակերտը ծուլութիւնից է փորձվում, եթէ նորա մէջ զարթնում է չար կամք իւր շասերի պատրաստութիւնը յետաձգել կամ բնաւ չսկսել:

Գ. Ինչ է Բարեխիտ — Ինչ է (նոյն առակ):

Բարեխիտ — խղճի ձայնին լսելով:

ա. խղճի ձայն:

բ. լսելը:

գ. գաղափար և նորա հակադրութիւն:

դ. օրինակներ:

Պատարումն: — Գայլը յորդորում է շանը, որ հօտի պահպանութիւնը թողնէ և հովուի պէս հանգստանայ ու քնէ: Բայց շան խիղճը ասաց. «Գու քո տիրոջ խոստացել ես, միշտ հաւատարմութեամբ պահպանել հօտը և չը թողնել առանց քո հսկողութեան: Խոստումդ պարտաւոր ես կատարել, մանաւանդ աւելի ևս, երբ որ տէրդ քո պահպանութեան

յուսով միայն՝ փտահասցել է հանգստանալ ։ Եունը հօտի մօտ արթուն մնաց և հաշտելով զարթեցրեց տիրոջը՝ որ գայլին հալածեն ։ նա ուրեմն լսեց իւր խղճի ձայնին ։ Ով որ այսպէս է գործում ։ նա բարեխիղճ է ։ Գաղափարի հակադրութիւնն է՝ անխիղճ ։ Անխիղճը ոչ թէ զուրկ է խղճից ։ այլ նա չի լսում նորա ձայնին և չի ուզում նորա սանձով առաջնորդուիլ ։ Այսպէս դերձակը բարեխիղճ է ։ եթէ հագուստը ձեւելու ժամանակ՝ մահուդի մնացորդ կտորները դարձնում է տիրոջը ։ Բայց անխիղճ է այն անտեսը ։ որ տան հարկաւոր պարագաները շուկայում գնելիս՝ ծուլութիւնից կամ իւր յարմարութեան համար՝ ապրանքները լաւ չի զննում և փտածը լաւի տեղ է բանեցնել տալիս ։

10. Ինչ է կեղծարութիւնը (նոյն առակ) ։

Կեղծարութիւն — սոքա ձեւանալը՝ հաւատարմութիւն հաւանութիւն կամ գովեստ ստանալու համար ։
 ա. Գայլը ձեւանում է ։ զմար զմ նայրուսը զպալ ։
 բ. նա ուզում է շան փտահոութիւնը ստանալ ։
 գ. գաղափարի որոշումն ։
 դ. կեղծարութեան տեսակներ՝ իրր առաքինութիւն ։
 իրր բարեպաշտութիւն ։ իրր բարեկամութիւն ։
 ե. շողջորթութիւնից զանազանութիւնը (Ազուէս և ագռաւ) ։

11. Ինչ է պարտադրութիւնը (նոյն առակ) ։

Պարտամտաց լինել — թեթեամտութիւնից կամ յարմարութեան պատճառով չը կատարել իւր պարտականութիւնները ։
 ա. Հոյիւր թեթեամիտ գանուեցաւ ։
 բ. ոչխարների պահապան լինել՝ նորա պարտքն էր ։
 գ. պարտադանց եղաւ ։
 դ. գաղափար ։
 ե. օրինակներ ։

Ե. Օրինակի նմանութիւն ։

Ի « Խեղտ ուրեի ուրեի նմանութիւն ։ Աշակերտը պարզ գաղափար պէտք է կազմէ նմանութիւն յօրինելու վարժութեան մասին ։ Այս վախճանով ինքը ուսուցիչը ձեւացնում է առաջին նախադասութիւնը զանազան կերպերով ։ Զոր օր ։ Մի սոված եղ ուզեց պարտիզի կանաչ խոտը ուտել ։ բայց մօտենալու հնար չը կար ։ որովհետեւ պարտէշը ցանկապատ էր ։ — Մի քաղցած կատու ուղեց պղինձը վրէն ծածկած խորովածի համն առնել ։ բայց չէր կարողանում թաթը մեկնել դէպի խորովածը ։ որովհետեւ պղինձը ծանր էր ։ — Մի ուսումնատենչ պատանի ցանկանում էր ամեն անսակ օգտակար ծանօթութիւններ գիտնալ ։ բայց չէր կարողանում

հարկաւոր գրքեր գտնել որովհետեւ աղքատ էր: — Մի հիւանդ մարդ բժշկի օգնութեան կարօտ էր: բայց չէր կարող ոչ մէկի յետևից ուղարկել, որովհետեւ դրամ չունէր բժշկի կառքի և աշխատութեան վճարը հատուցանելու: — Այս օրինակները պէտք է կրկնել տալ: Գուցէ մի երկու օրինակից յետոյ աշակերտը փորձէ նմանները անձամբ գտնելու:

Ապա պէտք է ամբողջ հատուածի նմանաձևութիւնը յօրինել տալ: Սարեկը հետամուտ էր մի բանի, բայց նորա դէմ ելան մի, երկու, երեք արգելքներ: Աերջապէս նա մի հնար գտաւ և հասաւ իւր նպատակին: Հիմա երևակայենք այսպիսի դէպք: Մի մանուկ կամենում է առուակի միւս ափը անցնել, բայց ի դուր, և ինչո՞ւ: Այն տեղ չը կայ կամուրջ կամ մի գերան: Նա ինչ հնարներ կը հնարէ: Նախ նա երևի կուզենայ մի թռուցք անել: Բայց այս մտադրութեան դէմ մի արգելք կայ: առուակը աւելի լայն է, նա ուրեմն պէտք է ուրիշ հնար մտած է: — Նա ուզում է ոտքով ջրի մէջ մտնել: Ի՞նչ արգելք կարող ենք դնել այդ մտադրութեան դէմ: Այն թէ առուակը խոր է, կամ նա չի վըստ տահանում կօշիկները հանել և ոտարօրիկ անցնել: Տեսնենք, թէ այս վերջին արգելքներից ո՞րն աւելի կը յարմարի այն հնարին, որ մանուկը ի վերջոյ գործ է դնում: Բայց էլ ի՞նչ հնար է մնում: Գուցէ սարեկը մեզ սովորեցնէ: — Մանուկը մեծ մեծ քարեր է բերում և առուակի մէջ տեղ թափում է այնքան, մինչև որ նոքա հասնում են ջրի երեսը: ապա նոցա վերայ քայլելով՝ անցնում է միւս ափը: Աաւ, բայց այս ցոյց է տալիս, թէ խորութիւնը շատ մեծ չի եղել, որ մանուկը կարողացաւ անթաց կօշիկներով անցնել առուակը:

Ապա աշակերտի մէկը այսպէս է կազմում նմանաձևութիւնը: Մի աշակերտ ուզում էր առուակի միւս ափը անցնել, բայց կարելի չէր, որովհետեւ կամուրջ չը կար: Մէկ մտածեց, որ մի ափից թռչէ դէպի միւսը, բայց տեսաւ, որ առուն բաւական ընդարձակ է: Յետոյ ուղեց ջրի մէջ ոտքով մտնել, բայց այն ժամանակ կօշիկները խիստ կը թրջուէին: Աերջապէս հանգամանքները վեր ու դիր անելով՝ խորհուրդ յղացաւ և սկսեց մեծ մեծ քարեր բերել և թափել առուակի մէջ տեղը, մինչև որ կարողացաւ նոցա վերայ քայլելով անցնել միւս ափը:

Այս նմանաձևութեան վերնագիրը ի՞նչ պէտք է լինի. «խելօք մանուկը»:

Մի քանի աշակերտ կրկնում են նմանաձևութիւնը և ապա ամենքը պատուէր են ստանում, որ մտադրութեամբ գրաւոր ձևացնեն:

Ահա և մի ուրիշ նմանաձևութիւն, որ ուսուցչի առաջնորդութեամբ աշակերտները կարող են կազմել:

Մի մանուկ իւր գլխի ձարը գտնում է:

Մի մանուկին ուղարկեցին պարտեզը՝ որ հաւաքէ ծառից թափուած տանձերը։ Բայց որովհետեւ ոչ մի հաստ գետնի վերայ ընկած չը գտաւ իսկ ձեռնունայն դառնալ ևս չուզեց։ Կա փորձեց թափ տալ ծառը՝ բայց ծառը չը շարժուեցաւ։ Եպա աշխատեց ծառի վերայ ելնել և վերեւից տանձը քաղել։ այլ այնքան հաստ էր ծառի բունը, որ չը կարողացաւ վերան փաթածուիլ։ Մի ոստիւն էլ անելով կամեցաւ ցածը կախած ուտը բռնել։ բայց սա դեռ էլի բաւական բարձր էր։ վերջապէս գնաց քարեր մերեց և տանձերին տալով վայր թափեց։

2. Այս է և ինչը որով նման էին իրար Ծուլ և առուշտի ածու.

Մի քանի կովեր և մի ցուլ արածուժ էին մի վտիտ արօտատեղում որի սահմանակից էր սիրուն ածու՝ մէջը առուշտը կանաչացած։ Հէնց որ ցուլը տեսաւ այդ առուշտը՝ որ բայց և այնպէս արօտատեղից ցանկով բաժանուած էր փորձեր արեց, որ ցանկը վեր ձգէ և մանէ ածուի մէջ։ այլ անյաջող։ Իսկ որպէս զի իւր ձգուներնրի ակննատեօ կովերը իրան չը ծագրեն, դարձաւ տեղից և ապաց։ Եւ առուշտը դեռ ևս նոր է ձլել։ նա իմ փորիս վնաս է։

3. Կատու և խորոված.

Կատուները մի խումբ կազմելով գնացին խնջոյք անելու և մտան մի մառան, ուր պատրաստ խորոված գտան։ բայց երեսը պղնձով ծածկուած։ Ծոցանից մեկը հոտն աննելով շուտ թռաւ պղնձի վերայ և ամեն կերպ աշխատեց թաթ ու դօշով շարժել պղինձը։ սակայն նա շատ ծանր էր։ Բայց որովհետեւ իւր ընկերների ծիծաղից վախենում էր, արագ արագ իջաւ պղնձից և գռչեց։ Փոհ չեմ կարող հոտան խորովածը ուտել։

Մանուկ և բոյն։ Կալուածք գնող և այգի։

3. Մուկ և ախիւ՝ որով նման էին իրար։ Երբ և սկիւռ։ Սա վայր է ընկնում քնած արջի վերայ, իսկ ժամանակ անցնելուց յետոյ վերջինը թակարդի մէջ է բռնվում, որոյ ցանցերը սկիւռը իւր սուր ատամներով կոծոտում է։ Բարդ և ճանձ։ Սա խճճվում է սարդիստայնի մէջ։ Յետոյ մի թըռչուն սարդի դէմ դարմանակալ լինելով ճանձը գալիս է վտանգուածին դգուշացնելու։

4. Իշխան և մանուկ։ Սա և իւր ընկերները պալատի դէմ հրապարտիւթում բարձրադաղակ խաղում էին և խանգարեցին իշխանի քունը։ Եզադակողներից զլիաւորին բերում են իշխանի առաջ։ Սա յետոյ անտառի մէջ մոլորվում է և մանկան օգնութեամբ գտնում է ուղիղ ճանապարհը։

4. Եւրջո՞ծ ախիւ՝ որով նման էին իրար։

տ. Մերացած արծիւ:

բ. Ընդհանուրութիւն գործելու պատճառով հացի կարօտ մնացած տընտեսք:

Յ. « Եւս և քոյ » «-ի նախ-ի-ն:

ա. Եղուէս և շուն. Մի ձկնորս մի քանի կարգ էր ձգել և սարգել ջրի մէջ, Հունը նորա կշտին էր: Երկար սպասելով ձանձրացաւ. քնեց: Մի աղուէս մերձենում է:

բ. Գինեմոլը և արիաջան ընտանեւեր հայրը: Հայրը առաւօտուանից մինչև գիշերը աշխատում է: Նորան այցելութիւն է գալիս դրացին, որ անհոգ անառակ մարդ էր: Երկուսի խօսակցութիւն. վերջինը գայթակղեցուցիչ խօսքեր է ասում. առաջինը յանդիմանում է և երեսը արհամարհանքով նորանից դարձնում է:

գ. Հաւատարիմ գործակատար. Մի վաճառական պատրաստուելով ճանապարհ ընկնել առուտուրը յանձնում է իւր ծառային: Սոված կեղծ բարեկամը գալիս է մօտը, որ պարտաճանաչութիւնից խտորեցնէ և ինքը այդ բանից շահուի:

դ. Ընդորր կեանք և խղճի ձայն: Մի երիտասարդ պաշտօնեայ գայթակղեցուցիչ օրինակ էր տեսնում աւելի հասակաւոր ընկերի մէջ, որովհետև սա անդորրութիւն սիրելով վերին աստիճանի պարտամուտաց էր: Կրտսերը միշտ անխոնջ աշխատում էր: Բայց յանկարծ գիւրասիրութիւնը սորան էլ հրապուրեց, և սա սկսեց իւր հեշտութեան մասին մտածել: Սակայն պարտաճանաչութեան զգացմունքը բողբոջեց նորա սրտի մէջ և յաղթութիւնը տարաւ:

Զ. Բ ա ղ դ ա տ ու թ ի լ ն կ ա մ հ ա մ ե մ ա տ ու թ ի լ ն:

1. « Խեց » «-ելը » և « Կռ-ի » «-իւշը » «-իւրի հոմեւոր-ի-ն: Եւս վարժութիւնը այնպէս է սկսվում, որ ուսուցիչը բաղդատելու առարկաներից մէկի համեմատական կէտը յայտնում է գատողութեան ձևով, իսկ աշակերտը այդ նախադասութիւնը գործ է դնում միւս առարկայի վերայ, կցելով և նոցա տարբերութիւնները: Մեր օրինակում համեմատելի նախադասութիւնները սոքա են.

Առաջին առակի մէջ գործող անձը մի կենդանի է: Ով որ մի բանի պէտք է չէ, նա ունի կարիք: Սարեկը մի կարիք ունէր, Սարեկը հնարաւորութեան ելք ունէր իւր ծառաւի պապակը կտրելու: Սարեկը աշխատում էր հասնել այն բանին, ինչ որ փնտռում էր և գտաւ: Նա արդեւքի հանդիպեցաւ: Սարեկի մտադրութիւնը յաջողուեցաւ:

Եւշակերտը այնպէս պէտք է օգտուի զոր օր, առաջին նախադասութիւնից, որ հետեւեալ համեմատական նախադասութիւնը գլուխ գայ: Երկու առակների մէջ էլ գործող անձը մէկ կենդանի է: սակայն մէկի մէջ մի սարեկ է, միւսի մէջ՝ մի աղուէս:

Եւ որպէս զի աշակերտը կարողանայ այն բոլորը մտքի մէջ պահել ինչ որ նա յետոյ իւր շարագրութեան մէջ պէտք է ամբողջացնելով ձեւացնէ, կարելի է կամ տեղեկացնելուց յետոյ իւրաքանչիւր համեմատական կէտը աշակերտներին յուշատետրի մէջ արձանագրել տալ, կամ այդ արձանագրելի կէտերը դասի վերջը գրել դասատան գրատախտակի վերայ ի տես ամենեցուն: Ըստ ջին դէպքում աշակերտը իւր յիշատետրը ձեռին կազմում է համեմատութիւնը՝ առաջնորդուելով և օժանդակուելով մէջը արձանագրածներին: Երկրորդ դէպքում նա իւր աչքը պէտք է ուղղէ դէպի գրատախտակը: Յիշողութեան համար արձանագրածը մտաւորապէս այս ձևը ունի:

ա) Գործող անձը մէկ կենդանի — սարեկ, աղուէս:

բ) Կարիք — ծարաւ, քաղց, և այլն:

Համեմատութիւնից կոկիկ ամբողջութիւն կազմելու համար՝ շարագրութիւնը մտաւորապէս այսպէս կը լրանայ:

Երկու դէպքումն էլ գործող անձը մէկ կենդանի է, սակայն մէկի մէջ մի սարեկ, միւսի մէջ մի աղուէս: Երկուսն էլ մի կարիք ունին, որի գոհացման հետամուտ էին. սարեկը ծարաւ էր, իսկ աղուէսը քաղցած: Եւ յգ կենդանիներից իւրաքանչիւրը իւր կարիքը լցուցանելու համար ելք տեսաւ. ծարաւը սարեկին բերեց մինչև փարձի ջուրը, իսկ որո՞ւ ի՞նչ աղուէսին ման անեց մինչ հասած խաղողի որթը: Եւ սարեկը եւ աղուէսը աշխատում էր տիրանալ այն բանին, ինչ որ փնտուելուց յետոյ յաջողութեամբ գտել էր: Բայց երկուսն էլ հանդիպեցան արգելքների: Ջուրը խիստ խորն էր փարձի մէջ. խաղողի ողկոյցները խիստ բարձր էին կախուած: Սակայն սարեկը մի միջոց գտաւ իւր նպատակին հասնելու. իսկ աղուէսը հակառակ հնարախոհութեան և իւր յայտնի խորամտնողութեան՝ ստիպուեցաւ ձեռնունայն և դատարկ փորով դառնալ:

2. Աղուէս և սարեկ: Երկուսն էլ խաղողի մէջ փնտուելու էին: Երկուսն էլ փնտուելու էին:

Բացատրութեանց ժամանակ համեմատելու նիւթը կարելի է հետևեալ ձևով համառօտակի արձանագրել տալ:

ա) պատահական հայեացք դէպի վեր—որթ, ագուաւ:

բ) Իւրաքանչիւրն ունի գրաւիչ բան—խաղող, միս:

գ) Այն ստանալու բաղձանք—բաղձալու տարբեր արժեքը:

դ) Կամացուկ քայուածք—նպատակ:

ե) Ստանանալու հնարաւորութիւն — եթէ դէպի վեր:

զ) դէպի վայր:

զ) Նոցա գործը — արարքը, խօսքը:

է) Հետևանք—սրսնեղութիւն, ուրախութիւն, Վախճան:

Համեմատութեան ոճով բացատրութիւն. — Վերնագրի մէջ յիշատակած առակներում հանդիսացող երկու աղուէսներից իւրաքանչիւրը՝ իւր ուշագրութեան արժանի բան նկատեց. երբ որ նա որսալու գնացած ժամանակ իւր աչքը դէպի վեր ուղղեց. բայց մէկը տեսաւ պատին կրթնած վազի թուփ. միւսը՝ կաղնու ծառի վերայ մի ագռաւ. Ինչպէս վաղը նոյնպէս և ագռաւը ունայն չէին՝ այլ վազի վերայ կար խաղող. իսկ ագռաւն ունէր միս. որ գողացել էր պարտիզում. Մի աղուէսն իսկոյն բաղձացաւ խաղող. իսկ միւսը՝ միս. սակայն մի միայն խաղողը բաղձալու արժանի էր. որովհետեւ նա արգարեւ հասուն և քաղցր էր. մինչդեռ միւսը ընդհակառակ թունաւորած էր.

Հէնց որ երկու աղուէսները ցանկալի առարկաները տեսան. իսկոյն ամենայն զգուշութեամբ իրանց ոտքի շշուկը մեղմացրին. մինը՝ որպէս զի վախ չուտէ. միւսը՝ որպէս զի ագռաւին չվախեցնէ: Եւ իւրաքանչիւրի համար էլ հնարաւորութեան գուռ կար. որ հասնէ ցանկացածին. բայց աղուէսի համար միայն այն. եթէ ինքը դէպի վեր բարձրանայ խաղողի տեղը. իսկ միւսի համար այն. եթէ մնի կտորը դէպի վայր ընկնի իրաբերանում: Նոքա անփոյթ չը մնացնէ. որ իրանց նպատակին հասնին. բայց մէկը գործի դիմեց իւր արարքներով. նա ոտտնեց և մագլցեց. միւսը՝ իւր քաղցր խօսքերով. նա գովեց և շողջորթեց. Հետեանքը տարբեր էր: Մէկի ձեռնարկութիւնը անյաջող վերջացաւ. միւսի փափագը կատարուեցաւ. ուստի և մէկը նեղացաւ. միւսը խնդաց: Սակայն սրտնեղութիւնը այնքան վնաս չը տուեց. որքան խնդութիւնը. սրովհետեւ վերջինը շատ շուտ ցաւի և մահուան փոխուեցաւ. այն ինչ առակի մէջ ոչինչ չի ասվում. թէ սրտնեղութիւնը միւս աղուէսին որ և իցէ. վնաս տուած լինի:

3. « Աղուէս և ագռաւ » և « Ծառն ու քայ » առակների համեմատութիւն:

Հարագրութեան մէջ ի նկատի պէտք է առնուին մօտաւորապէս հետեւեալ նմանութիւններն ու տարբերութիւնները.

Գործող և խօսող անձինք են երկու կենդանիք և մէկ մարդ. — հովուին և պարտիզպանին յանձնուած է մի մի բարիք. որ նոքա պարտաւոր են անինամ չը թողուլ. այն է՝ հօտ և պարտէզ. — աւանդին վտանգ է սպառնում մի կենդանի՝ դրացի կատուն. գայլը. — պաշտպանութիւն թնամու դէմ՝ շուն. թոյն. — տարբեր գիտաւորութիւններ՝ խափանել. ոչնչացնել. — աղուէսն ու գայլը մի մի բան են նկատում. ի՞նչ. — երկուսն էլ քաղցած ու անօթի են. — մտքի մէջ մի բան են գնում. վրձնում են՝ խափել. յափշտակել. — գողունի մօտենում են սուտ բարեկամական ողջոյն են տալիս. — մէկը կեղծաւորվում է. միւսը շողջորթում է. — երկուսն էլ խօսակցութիւն են բաց անում. — երկուսն էլ

զբանչանում են շան իսկական առաքինութիւններից, ազգաւի շունեցած առաւելութիւններից. մէկը՝ հաւատարմութիւն, միւսը՝ հաճութիւն վաշելելու համար. — շունը խելացի է և իմանում է գայլի պատրողական հնարքը. ազգաւը յիմար է և թողնում է որ իրան իշացնեն — գայլը չի համոտում նպատակին, բայց այն տեղից առողջ գլխով է դառնում. ազգաւը համոտում է նպատակին, բայց մի և նոյն ժամանակ իւր կեանքն է վճարում:

Ե. Զուգակշիռք. Բաղդատութիւնից աւելի հեշտ է այս վարժութիւնը. Թէպէտ երկուսն էլ համեմատելով են գլուխ գալիս, բայց զուգակշիռքի մէջ համեմատվում են միայն նման հանգամանքները, իսկ բաղդատութեան մէջ նաև նման եւ աննմանները: Զուգակշիռքի համար ամենայարմար նիւթ է օրինակը և նորա նմանութիւնը, զոր օրինակ

Խելջք սարեկը և խելջք մանուկը:

Բանաւոր բացատրութեանց ժամանակ հարկաւոր է համապատասխան կէտերը հետեւեալ կերպով դէմ առ դէմ ցոյց տալ. ապա ամբողջը պէտք է ի մի ձուլել, կարգաւորել և խօսքի կապերով լաւ միացած գրի առնուլ:

Մի սարեկ կամենում է և այլն. — Մի մանուկ կամենում էր և այլն. Սարեկը կտուցը քաշում է դէպի ջուրը. — Մանուկը փնտռում է կամուրջ. Փարչի ջուրը տակը հեռու է կտուցից. — Կամուրջ չը կայ. Սարեկն ուզում է փարչը կտարել. — Մանուկը առուի վրովը թռչելու փարչի պատը հաստ է. — Առուն լայն է. Սարեկն ուզում է փարչը վայր ձգել. — Մանուկը առուի ջրի մէջ մտնել. Փարչը ծանր է. — առանց կօշիկի՝ ոտաբորիկ չի ուզում մնալ. Սարեկը մանր քարեր է հաւաքում. — Մանուկը մեծ մեծ քարեր է բերում. նա փարչի մէջ է լցնում, սա ձգում է առուի մէջ տեղը. Զուրը փարչի մէջ բարձրանում է. — Քարերը առուի մէջ բարձր կայտ են կազմում. Սարեկը ջուր է խմում. — Մանուկը անցնում է միւս ափը:

Ը. Դիմաւոր խօսակցութեան փոխադրութիւնը պատմական ձևի:

1. Այսինքն և այլն. — — — — — օրինակ. Երբ որ ուզում ենք խօսակցական ձևը հասարակ պատմական խօսքի դարձնել, ամենից մեծ դժուարութիւն են պատճառում բացակայութիւններն ու իւր-իւրերը. նոքա իրանց համառօտութեան պատճառով մեծ մասով կարօտ են մեկնութեան: Այդ բաները աւելի հասկանալի կը դառնան եթէ դոցա համառօտութիւնը լրիւ արտայայտուած մտքերով թարգմանուի. Եզանակն էլ այս է.

Որո՞նք են այն բաները, որ աղուէսը ազգաւին ասաց, Առակի մնացած բաները ո՞ւմն են պատկանում: Արդ ինչ որ աղուէսն է խօսել, այն պէտք է պարտաւոր հաղորդենք:

Աղուէսի առաջին բառերն են « Ողջոյն քեզ » . մենք էլ կարող ենք պատմել նորա մասին, թէ նա ուրիշ ոչ ունի, Յետոյ աղուէսը ազգաւին կոչում է « Արամազդի թռչուն » . մենք կարող ենք աղուէսի մասին պատմել, թէ նա ողջունելու ժամանակ աղուէսին անուանեց Արամազդի թռչուն : Երբ որ այսպիսի ողջունով աղուէսը ազգաւի ուշադրութիւնը դէպի իւր անձը գրաւեց, առանց նորան վախեցնելու, նա շարունակեցինք ուրախութիւն է սրտիս համար, որ տեսնում եմ քեզ » : Եթէ այս բառերը պատմել ուզենանք, այն ժամանակ « ինչ » կը թորդամանութիւս կամ « շատ » բառով « ուրախութիւն » գոյականը՝ բայով իսկ « սրտիս համար » կը բարձուի, և մենք այսպէս կը ձևացնենք . Երբ որ յայտնեց, թէ շատ ուրախ է, որ տեսնում է ազգաւին, նորա խօսքի շարունակութեան մէջ ասուած է « որովհետեւ », որով մենք լլսում ենք, թէ նա ուզում է պատճառներ առաջ բերել, և ուրեմն մենք էլ նորա մասին կարող ենք պատմել, թէ նա իւր ուրախութեան պատճառները թուեց, նորա հետեւեալ խօսքի « ուստի » բառից մենք պետք է իմանանք, թէ այդ խօսքը առաջուայ ասածների եղբայրացութիւնն է մենք ուրեմն կը պատմենք այսպէս — իսկոյն նա հետեւեցրեց, թէ նորան իրաւամբ . . . « Տես » բառը այն նշանակութիւն ունի, ինչքան և « հաւատայնում եմ քեզ » կամ « ապահով եղիր » և մենք վերջ բանի կը պատմենք — վերջապէս հաւատացրեց ազգաւին, թէ . . .

Ուրեմն աղուէսի ուղղակի խօսակցութիւնը՝ հետեւեալ անուղղակի ձև կը ստանայ, և թէ առակի պատմական մասի հետ կցելով՝ շարունակենք և ասենք . . . մի աղուէս քսմունելով լուս ընկաւ, շողքորթ ձայնով ողջունեց, Արամազդի թռչուն անուանեց և յայտնեց, թէ խիստ ուրախ է, որ տեսնում է ազգաւին, Եւ երբ որ այնուհետեւ իրրև իւր ուրախութեան պատճառ առաջ բերեց, անշուշտ ազգաւի փետուրների գեղեցկութեան և նորա կուցի ուժին ոչ որ նորա եղբայրակիցներից չէ հասնի, և այդ բաներից եղբայրացրեց, թէ իրաւամբ միւս բոլոր թռչունները ազգաւին ծառայում են, վերջապէս հաւատացրեց նորան և այն թէ ինքը որ ու գիշեր կարող է իւր տեղը անշարժ կենալ, նորան նայել հիանալ և սքանչանալ, բնաւ չը կշտանալով նորա տեսքից :

Ազգաւի բառերը « Հարկաւոր . . . » կարելի է այսպէս թարգմանել . « ինքը պարտաւոր է, մտածեց նա, վարձատրել աղուէսին, նորա ընծայած փառաբանութիւնների համար » :

2. « Աւի-ձ և մի » ուրիշ հարց ուրիշ էր . Ամբողջ գործի համար բաւական համարենք միայն մի քանի ասութիւնների ձևափոխութիւնը :

« ԱՏ » բացականչութիւնը այս տեղ զարհուրանաց ձայն է, և ուրեմն

պէտք է պատմուի, թէ մուկը զարհուրած ձայնով աղաչեց առիւծից՝ որ . . .

«Քեզ ի՞նչ օգուտ իմ մահս» հարցմունքը՝ ճարտասանական գարձուածք է, որ նշանակում է «իմ մահը քեզ չի բերի ոչինչ օգուտ» որով յայտնի է, թէ այն խօսքին ինչ կերպի պատմական ձև պէտք է տալ:

«Գնա» . . . կտորը այսպէս կարելի է փոխել. Մեծահոգութեամբ պատասխանեց առիւծը, թէ նա պատրաստ է խնդիրը կատարել, և իրոյն արձակ թողուց մկան. Իսկ ինքն իւր մտքի մէջ ծիծաղեց նորա խոստման վերայ, որովհետև չէր կարծում, թէ մի մուկ կարող է առիւծին երախտագիտութեամբ լաուութիւն անել:

«Համբերիր, բարեկամ» — մտերմաբար մոխթարեց, որ կարճ ժամանակ սպասէ:

Ս. ՄԱՆԳԻՆԵԱՆ.

(Հարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ

Օգոստոսի 21 ին Վեհափառ Հայրապետն ազգիս, բարեհաճեցաւ վերադառնալ ամարանոցից Ս. Աթոռս: Բոլոր միաբանութիւնը Մայր Աթոռոյս, աշակերտք ու վերակացուք ձեմարանի և խուռն բազմութիւն ժողովրդոց Վաղարշապատի հրապարակի դրան առաջ սպասում էին նորին Օծութեան: Երեկոյեան 8 ժամին, արդէն մութն ընկած, երեկեցան նորին Օծութեան և նրան ուղեկցող պաշտօնատար և մասնաւոր անձանց կառքերն ու ձիաւորաց խումբը: Կառքից իջնելով նորին Օծութիւնն գնաց Ս. Տաճարն, ուր սովորական աղօթքը կատարելից և ներկայ ժողովրդեան օրհնելից յետո՛ գնաց Վեհարան Հանգստանալու: